ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ 2025Թ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի վարչական մասի եկամուտների տարեկան 5 962 806 109 դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 2 801 264 070 դրամ, կամ 1-ին կիսամյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 47,0 %-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը՝ 2 289 678 000 դրամի դիմաց կատարվել է 926 199 131 դրամ կամ կատարվել է 40,5 %-ով՝ :

1. Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 1 723 976 ,0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 650 751,5 հազար դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 37,7 %-ով, այդ թվում անշարժ գույքի հարկի առաջադրանքը կատարվել է 37,3 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 29.6 %-ով, տեղական տուրքերը՝ 85,3 %-ով, պետական տուրքերը՝ 58,9 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը՝ տարվա համար նախատեսված 171 606,65 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 146 350,9 հազար դրամ:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 21 000,0 հազար դրամի դիմաց փաստացի կազմել է 12 362,5 հազար դրամ:

2. Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 1 824 774,6 հազար դրամ:

3. Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը նախատեսված 589 061,0 հազար դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 325 737,9 հազար դրամ, կամ կատարվել է 55,3 %-ով, նույն թվում՝

հողերի վարձակալությունից եկամուտները՝ 32,5 %-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 70,4 %-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը 3 998,0 հազար դրամի դիմաց կազմել են 1 599,2 հազար դրամ:

4. **Տեղական վճարների մասով** բյուջեում նախատեսված 422 212,5 հազար դրամի դիմաց գանձումները կազմել է 209 823,3 հազար դրամ կամ կատարվել է 49,7 %, որից աղբահանության վճարների մասով 201 442,0 հազար դրամի դիմաց գանձվել է 107 584,9 հազար դրամ կամ կատարվել է 53,4 %-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով գանձումը կատարվել է 45,9 %-ով:

<u>Ծախսեր</u>

2025 թ. համայնքի բյուջեի վարչական մասի 1-ին կիսամյակի ծախսերը կատարվել են 30,1 %-ով՝ 5 962 806,1 հազար դրամ առաջադրանքի դիմաց կատարվել է 1 795 799,1 հազար դրամ, որից՝ ծախսերն ըստ ծրագրերի կատարվել են՝

ա/ Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը կատարվել է 31,5 %-ով:

բ/ Տնտեսական հարաբերությունների ոլորտում նախատեսված ծախսերը կատարվել է 58,7 %-ով:

գ/ Շրջակա միջավայրի պաշտպանության համար նախատեսված ծախսերը կատարվել է 44,6 %-ով:

դ/Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ նախատեսված ծախսերը կատարվել է 50,1 %-ով:

ե/Առողջապահության համար նախատեսված ծախսերը կատարվել են 15,0 %-ով:

զ/Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով ծախսերը կատարվել է 41,9 %-ով:

է/Կրթության ոլորտի համար բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել է 42,4 %-ով:

ը/Սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսեր առայժմ չեն իրականացվել՝ պայմանավորված օրենսդրական փոփոխություններով :

Մասիս համայնքի 2025թ. բյուջեի ֆոնդային մասի մուտքերը նախատեսված 3 790 059,391 հազար դրամի դիմաց կատարվել է 2 066 043,41 հազար դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 1 595 349,969 հազար դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ 226 434,1 հազար դրամ, կապիտալ սուբվենցիա՝ 25 290,819 հազար դրամ, կապիտալ սուբվենցիայի տարեսկզբի մնացորդ՝ 218 968,522 հազար դրամ:

2025 թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կազմել են 254 086,3 հազար դրամ, որից՝

ա/ Համայնքային ենթակայության շենքերի հիմնանորոգման, համայնքային ճանապարհների, համայնքում առկա ոռոգման համակարգերի հիմնանորոգման և կառուցման, համայնքի փողոցային լուսավորության համակարգի կառուցման և հիմնանորոգման, համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման, համայնքային այգիների բարեկարգման համար ծախսերը կազմել են 213 365,7 հազար դրամ,

բ/ համայնքապետարանի, համայնքային ենթակայության ՀՈԱԿ-ների համար վարչական սարքավորումների, գույքի, այլ մեքենա սարքավորումների, ոչ նյութական արժեքների համար ծախսերը կազմել են 34 210,9 հազար դրամ,

գ/ Համայնքում առկա շենքերի շինությունների հիմնանորոգման, բարեկարգման, նոր կառույցների գործարկման նպատակով նախագծա-նախահաշվային աշխատանքների ձեռք բերման համար ծախսերը կազմել են 6 509,7 հազար դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ